ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԿ-Ի «ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ» (ՀԱՄԱՏԵՂ) ԾՐԱԳՐԻ

ԵՎ

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

ՀՈԴՎԱԾ 1. ՆՊԱՏԱԿ

Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ-ն (ՀՖՄ) Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի (ՏՀԶԿԿ), Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի, «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի (ԵՀՀ) և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) հետ համատեղ, Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով, և Բյուրեղավանի քաղաքապետարանը (Քաղաքապետարանը), (այսուհետ Կողմեր), ցանկություն են հայտնում համագործակցել՝ Քաղաքապետարանի գործունեությունը ավելի արդյունավետ, պատասխանատու և հաշվետու դարձնելու, հանրային ներգրավվածությունը ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների գործընթացում բարձրացնելու, ապակենտրոնացման բարեփոխումների վերաբերյալ քաղաքացիներին վստահելի տեղեկատվություն տրամադրելու, քաղաքացիական հասարակությունը հզորացնելու, արդյունավետ, հաշվետու և մասնակցային տեղական ինքնակառարում խթանելու ուղղությամբ: Առ այդ, Կողմերը կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր)՝ սահմանելու համար այդ նպատակին աջակցելու իրենց պարտավորությունները և մտադրությունները: Սույն Համաձայնագիրը չի նախատեսում ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսական միջոցների տրամադրում:

ՀՈԴՎԱԾ 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՀՖՄ-ն՝ որպես ՀԱՄԱՏԵՂ ծրագիրը ղեկավարող կազմակերպություն, ցանկանում է ԱՄՆ ՄԶԳ-ի միջոցով ոչ ֆինանսական օժանդակություն ցուցաբերել Քաղաքապետարանին՝ սույն Համաձայնագրի ստորագրման պահից շուրջ հինգ տարիների ընթացքում՝ տեխնիկական օժանդակության, դասընթացների և ծառայությունների մատուցման ձևով: Համաձայն «Ստանդարտ դրույթներ» հոդվածի 3.2. կետի ԱՄՆ ՄԶԳ-ն պայմանագիր է կնքել ՀՖՄ-ի հետ ոչ ֆինանսական օգնության ցուցաբերման վերաբերյալ՝ հետևյալ նախատեսված ձևերով.

1. ուսուցումների անցկացում, տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդատվական մարմնի ձևավորման, հանրային քննարկումների և լսումների կարգերի մշակում և տվյալ համայնքում ներդրման օժանդակություն,

2. տեխնիկական օժանդակություն, ներառյալ խորհրդատվություն և տեղեկատվություն՝ իրականացնելու ծրագրի տարբեր բաղադրիչները:
3. այլ հարակից ծառայություններ՝ համաձայնեցված և հաստատված ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից:

2.2. ԱՄՆ ՄԶԳ-ի միջոցով ՀՖՄ-ի կողմից վերոհիշյալ օժանդակությունը տրամադրելու դեպքում Քաղաքապետարանը պարտավորվում է.

1. սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցել ՀՖՄ-ի և ԱՄՆ ՄԶԳ-ի հետ, մասնավորապես ապահովել քաղաքապետի մասնակցությունը, որպես Համաձայնագրի հիմնական կողմերից մեկը,
2. ապահովել քաղաքապետի կողմից հիմնահարցերի լուծման լիազորությունը, ինչպես նաև Քաղաքապետարանի այն աշխատակիցների մասնակցությունը և միջոցների տրամադրումը, որոնք անհրաժեշտ կհամարվեն ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից սույն Համաձայնագրում նկարագրված օգնության ցուցաբերմանը աջակցելու համար,
3. քաղաքապետի միջոցով նշանակել Քաղաքապետարանի ներկայացուցիչ, ով հանդես կգա որպես ծրագրի համակարգման գործակալ: Քաղաքապետը կտեղեկացնի ավագանուն և բնակչությանը Համաձայնագրի ստորագրման և ստանձնված քայլերի վերաբերյալ,
4. տրամադրել ՀՖՄ-ի կողմից անհրաժեշտ ճանաչված տեխնիկական օժանդակություն և ամփոփ ու ամբողջական տեղեկատվություն,
5. տեղեկություններ տրամադրել ՀՖՄ-ին, սահմանված հիմնահարցերի լուծման ընթացքում ձեռք բերված առաջընթացով հետաքրքրված այլ քաղաքապետարաններին և պետական մարմիններին՝ վերջիններիս դիմումի համաձայն,
6. ապահովել Քաղաքապետարանի այն ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր կազմակերպելու և որպես զեկուցող մասնակցելու են Քաղաքապետարանում և Հանրապետության այլ վայրերում կազմակերպվող սեմինարներին և գիտաժողովներին և մյուսներին են ներկայացնելու ՀԱՄԱՏԵՂ ծրագրի արդյունքները,
7. բացահայտել և լուծել ՀԱՄԱՏԵՂ ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկած իրավական, քաղաքականության և նորմատիվային բնույթի խոչընդոտները,
8. ամրապնդել Քաղաքապետարանի և համայնքի բնակչության, հասարակական կազմակերպությունների ու գործարարների միջև համագործակցությունը,
9. իրականացնել փոխհամաձայնեցված առաջարկներ:

ՀՈԴՎԱԾ 3. ՍՏԱՆԴԱՐՏ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1 **Հարաբերությունները Երկկողմանի համաձայնագրի շրջանակներում.** Սույն Համաձայնագրի համաձայն ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ցուցաբերվող ոչ ֆինանսական օժանդակությունը պայմանավորված է ԱՄՆ և ՀՀ կառավարությունների միջև 1992 թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված «Մարդասիրական և տեխնիկատնտեսական օժանդակություն ցուցաբերելու նպատակով համագործակցության մասին» համաձայնագրով և ենթակա է այդ Համաձայնագրի դրույթներին և պայմաններին, ներառյալ հարկային և մաքսային պարտավորություններից ազատվելու մասին դրութները:

3.2 **Երրորդ Կողմի գործոնը և միջոցների մատչելիություն.** Նպատակ ունենալով ցուցաբերել վերոհիշյալ և Հավելված 1-ում նկարագրված օժանդակությունը, ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է որոշակի պայմանագրային կամ այլ հարաբերություններ հաստատել մասնավոր կամ պետական կողմի հետ, եթե նպատակահամար գտնի: Ոչ ֆինանսական օժանդակության տրամադրման առումով, սույն Համաձայնագրի շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ-ի ստանձնած բոլոր պարտավորությունները պայմանավորված են միջոցների մատչելիությամբ և հետագա պայմանագրերով, որոնք կկնքվեն ԱՄՆ ՄԶԳ-ի և պետական կամ մասնավոր կողմի միջև: Սույն Համաձայնագիրը չի նախատեսում ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից Ֆինանսական միջոցների տրամադրում:

3.3 **Համապատասխանությունը ԱՄՆ օրենքներին և ենթաօրենսդրական ակտերին.** ԱՄՆ ՄԶԳ-ն պարտավորվում է սույն Համաձայնագրով հաստատված միջոցների տրամադրումը, ինչպես նաև այլ գործառնություններն իրականացնել միայն ԱՄՆ-ում գործող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի համաձայն:

3.4 **Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և գույքի օգտագործումը.** ԱՄՆ ՄԶԳ-ի

կողմից տրամադրված ամբողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Քաղաքապետարանին և ՀՀ կառավարությանը (ՀՀԿ), քանի դեռ այլ բան նախատեսված չէ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից տրամադրված և սեփականության իրավունքով Քաղաքապետարանին և ՀՀԿ-ին պատկանող ամբողջ գույքը պետք է արդյունավետ օգտագործվի վերոհիշյալ նպատակի համար, իսկ օժանդակության ավարտից հետո՝ այդ նպատակների հետագա զարգացման համար: Եթե ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից տրամադրած և սեփականության իրավունքով Քաղաքապետարանին և ՀՀԿ-ին պատկանող գույքը օգտագործվի այլ նպատակներով, քան համաձայնեցված է Կողմերի միջև, և այնպիսի հանգամանքներում, որոնք կարող էին խելամտորեն կանխվել Քաղաքապետարանի կողմից, ապա վերջինս ԱՄՆ ՄԶԳ-ի հայցի համաձայն պարտավոր է վերադարձնել այդ գույքը կամ փոխհատուցել գույքին համարժեք գումարը ԱՄՆ դոլարով:

3.5 **Փաստաթղթեր և վերահսկողություն.** Քաղաքապետարանը պետք է պատշաճ ձևով վարի օժանդակությանը վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը կամ ապահովի դրանց վարումը: Օժանդակության ավարտից հետո փաստաթղթերը պետք է պահպանվեն երեք տարի: Քաղաքապետարանը պետք է աջակցի ԱՄՆ ՄԶԳ-ի լիազորված ներկայացուցիչներին կամ նրանց կողմից նշանակված անձանց՝ օժանդակության ծրագրին վերաբերվող փաստաթղթերը ստուգելիս, դրանց համար ընտրելով ցանկացած խելամիտ ժամանակ:

3.6 **Տարադրամի փոխանակման դրույքը.** Եթե ԱՄՆ ՄԶԳ-ն կամ որևէ պետական կամ մասնավոր գործակալություն միջոցներ է տրամադրում Հայաստանին սույնով ԱՄՆ ՄԶԳ-ի պարտավորությունների իրականացման նպատակով, Քաղաքապետարանը պարտավորվում է ապահովել, որպեսզի այդ միջոցները փոխարկվեն ՀՀ դրամի փոխարկման պահին ամենաբարձր օրինական դրույքաչափով:

3.7 **Հրապարակայնություն.** Քաղաքապետարանը պետք է պատշաճ ձևով հրապարակի ստացված աջակցությունը՝ որպես ԱՄՆ ՄԶԳ-ի ներդրմամբ իրականացվող ծրագիր:

3.8 **Տեղեկատվական և իրականացման վերաբերյալ նամակներ.** ՀՖՄ-ն և Քաղաքապետարանը միմյանց կտրամադրեն ծրագրի շրջանակներում օժանդակության ցուցաբերման և վերջինիս արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ տեղեկատվություն: Բացի այդ, ԱՄՆ ՄԶԳ-ն ժամանակ առ ժամանակ կարող է ուղարկել ծրագրի իրականացման վերաբերյալ նամակներ՝ սույն Համաձայնագրում քննարկվող խնդիրների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու նպատակով: Կողմերը կարող են օգտագործել նաև փոխհամաձայնեցված նամակներ՝ հաստատելու իրենց փոխըմբռնումը սույն Համաձայնագրի իրականացման ընթացքի վերաբերյալ, ներառյալ Հավելված 1-ում նշված վափոխությունները: Ծրագրի իրականացման վերաբերյալ նամակները չպետք է օգտագործվեն Համաձայնագրի բովանդակությունը փոխելու նպատակով:

3.9 **Լիազոր ներկայացուցիչներ.** սույն Համաձայնագիրը ստորագրող Կողմերը կարող են ներկայացվել իրենց տնօրինած գրասենյակներում աշխատող անձանց միջոցով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է մյուսին գրավոր կարգով տեղեկացնել լրացուցիչ ներկայացուցչի նշանակման մասին, լիազորելով վերջինիս ներկայացնել տվյալ Կողմը բոլոր հարցերում, բացառությամբ սույն Համաձայնագրում պաշտոնական լրացումներ կատարելը: Կողմերը պետք է գրավոր կարգով միմյանց տեղեկացնեն իրենց կողմից լիազորված ներկայացուցիչների փոփոխության մասին:

3.10 **Լրացումներ և փոփոխություններ.** Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի գրավոր համաձայնությամբ: Հավելված 1-ի դրույթները կարող են փոփոխության ենթարկվել Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ առանց սույն Համաձայնագրում պաշտոնական լրացումներ կատարելու:

3.11 **Կասեցում և դադարեցում.**

ա. Օժանդակությունը կկասեցվի, եթե

1. Քաղաքապետարանը կամ ՀՀԿ-ը չի իրականացրել սույն Համաձայնագրով սահմանված որևէ դրույթ.
2. ԱՄՆ ՄԶԳ-ին հայտնի արտակարգ իրավիճակի ստեղծման մասին, որն անհնար է դարձնում սույն Համաձայնագրով սահմանված նպատակների իրականացումը կամ ՀՀԿ-ի կողմից սույն Համաձայնագրով սահմանված որևէ դրույթի ապահովումը.
3. ԱՄՆ ՄԶԳ-ն հայտնի, որ օժանդակության շարունակումը կհանգեցնի ԱՄՆ օրենքի կամ ենթաօրենսդրական ակտի խախտմանը:
4. ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է իր հայեցողությամբ քայլեր ձեռնարկել սույն Համաձայնագրի շրջանակներում ցուցաբերվող օժանդակության տրամադրումը ամբողջովին կամ մասնակի

կասեցնելու ուղղությամբ՝ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով Քաղաքապետարան: Սասնակի կասեցման դեպքում, նման ծանուցումը պետք է մասնավորեցնի այն կոնկրետ գործունեությունը, որի վրա կասեցումը տարածվում է: Եթե նման ծանուցում ուղարկելուց վաթսուն (60) օր հետո ԱՄՆ ՄԶԳ-ն գտնի, որ կասեցման պատճառը կամ պատճառները չեն վերացվել, ապա նա կարող է դադարեցնել օժանդակությունը՝ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով Քաղաքապետարան:

բ. *Դադարեցում.* Կողմերից յուրաքանչյուրը կարող է ամբողջովին կամ մասնակի դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ մյուս Կողմին գրավոր ծանուցում ուղարկելուց երեսուն (30) օր հետո: Սասնակի դադարեցման դեպքում, նման ծանուցումը պետք է մասնավորեցնի այն կոնկրետ գործունեությունը, որի վրա տարածվում է դադարեցումը: Սույն Համաձայնագրի դադարեցմամբ կդադարեն նաև Կողմերի պարտավորությունները՝ կապված տվյալ գործունեությունները ֆինանսապես կամ այլ ձևով աջակցելու հետ, բացառությամբ այն վճարումներից, որոնք պետք է կատարվեն երրորդ կողմին մինչև սույն Համաձայնագրի դադարեցումը կնքած պայմանագրերի համաձայն: Քաղաքապետարանի և ՀՀԿ-ի այն պարտավորությունները, որոնք սահմանված են սույն Համաձայնագրի 3.4. կետով և վերաբերում են Համաձայնագրի շրջանակներում տրամադրվող գույքին, սույն Համաձայնագրի դադարեցումից հետո մնում են ուժի մեջ: Բացի այդ, նման դադարեցումից հետո ԱՄՆ ՄԶԳ-ն կարող է սեփական ծախսերով իրեն փոխանցել Համաձայնագրի շրջանակներում տրամադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, եթե նշված ապրանքները առաքվում են այլ երկրից և դեռևս չեն ներմուծվել Հայաստան:

3.12 **Իրավասության փոխանցում.** Քաղաքապետարանը ընդունում է, որ սույն Համաձայնագրի հետ կապված կամ Համաձայնագրից բխող որևէ ԱՄՆ ՄԶԳ-ի հետ կնքված և վերջինիս կողմից ԱՄՆ դոլարով ուղղակի ֆինանսավորվող պայմանագրային պարտավորության խախտման դեպքում Քաղաքապետարանը քայլեր է ձեռնարկում համաձայն ԱՄՆ ՄԶԳ-ի հայցի:

3.13 **Իրավունքի պաշտպանության միջոցի պահպանում.** Սույն Համաձայնագրով Կողմին վերապահված իրավունքների կիրառման կամ դրանց պաշտպանության հետաձգումը չպետք է մեկնաբանվի որպես տվյալ իրավունքից կամ դրա պաշտպանության միջոցից հրաժարում:

3.14 **Լեզու.** Սույն Համաձայնագիրը կազմված է անգլերեն և հայերեն լեզուներով: Երկու տարբերակների մեկնաբանման ընթացքում ծագած որևէ երկիմաստության կամ անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

3.15 **Ուժի մեջ մտնելու ամսաթիվը.** Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկու կողմերի միջև ստորագրման պահից:

Ի հաստատումն սույնի, Կողմերը, յուրաքանչյուրը գործելով իր կողմից լիազորված ներկայացուցչի միջոցով, որոշեցին, որ սույն Համաձայնագիրը պետք է ստորագրվի իրենց անունից և հանձնվի 2014թ-ի դեկտեմբերի 2-ին:

Դավիթ Թումանյան
Հանձնակատարի ղեկավար

Հակոբ Բալասյան
Բյուրեղավանի քաղաքապետ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Իրականացման ծրագիր

Սույն իրականացման ծրագիրը ներառում է երկու բաղադրիչ.

Բաղադրիչ 1. Կառավարման համակարգեր
Բաղադրիչ 2. Քաղաքացիների մասնակցություն

Համաձայնագրում ներկայացված է ԱՄՆ ՍԶԳ-ի հիմնական մոտեցումը, որը կայանում է նրանում, որ ԱՄՆ ՄԶԳ-ի կապալառու ՀՖՄ-ն կիրականացնի վերը նշված բաղադրիչները: Այս բաղադրիչներն ունեն մի շարք ենթաբաղադրիչներ և պահանջում են Քաղաքապետարանի կողմից ցուցաբերվող զգալի համագործակցություն՝ ապահովելու ծրագրի ներդրմանը համապատասխան արդյունքներ: Կոնկրետ արդյունքներն ու հետևանքները պետք է համատեղ համաձայնեցվեն Կողմերի միջև:

Ծրագրի վերահսկում և գնահատման չափանիշներ

Շատ կարևոր է հետևել այս երկու բաղադրիչների առաջընթացին տարվա ընթացքում: Իրականացման ծրագրի յուրաքանչյուր մասում ներկայացված է ծրագրի գործողությունների իրականացման հակիրճ ժամանակացույց և գնահատման չափանիշ, որը միաժամանակ նպատակն է՝ և որը ցույց կտա ծրագրի առաջընթացը տվյալ գործողության շրջանակներում:

Տեխնիկական օժանդակության տրամադրում

ՀՖՄ-ն պարբերաբար կտրամադրի տեխնիկական օժանդակություն, կկազմակերպի վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ և պետական մակարդակի կլոր սեղաններ, որոնց կմասնակցեն քաղաքապետարանների ներկայացուցիչներ: Բացի պետական մակարդակի կլոր սեղաններին և սեմինարներին մասնակցությունից, նախատեսվում է, որ Քաղաքապետարանը ներկայացուցիչներ կնշանակի նաև ՀՖՄ-ի հայցի համաձայն: